

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՏԵԱԼԲԱՆ ԴԱՇՏԻՆ ՇԱԽԱՐԾԱԿԱՆ

Յաղթանակ քաջին գիւցադին Հայկայ՝ պատմեն ցարդ լերինք ըլուրք Շաւարշեան,
Վաթագ ք Հայրենեաց ձմին զսիրտ մեր, հսկել յարածամ Արձանս Արամեան,
Դամբարանք Հայոց մեծաց քաջազանց՝ հրդեհեն զսիրտս Հայկածին մանկանց,
Բուրէ յասկերաց հոտ քաջ ազգութեան՝ որք արեամբ շաղախ ի շէնս Վաթմոսեան:

Բացցին յարտասուս զաշտ անցորդաց՝ ասպարէզ մարտից և ճակատ Վեհից,
Անցորդաց՝ որոց արիւնն է շաղախ ազգամառ հոգւով, ընդ Հայոց բնաւից,
Գեղեցիկն զձայնս արձապանք լերանց՝ կցորդեալ մանկանց լալուց և ցաւոց,
Հանգերձ երամով թաուցեալ ի յօգս՝ քաղցր ի միմունջ պարակցեալ թռչնոց:

Վարեկցի՞ն արդեօք ձայնք մեր միարան՝ միմեանց Հայկայ սերունդք գերդգօն,
Խորտակի՞ն կապանք մեր արդեօք վշտաց՝ պարաւանդեալ խիստ՝ ի սպաս օն և օն,
Բարձրանա՞ն զրօշակք մեր արդեօք զօրաց՝ երկինեալ խաշանիշ պաշտելի դիմօք,
Խաղան ի ճակատ դունդ զօրաց մերոց՝ ի վրէժ թշնամեաց սահմանիս մեր արդեօք:

Դիւցադինդ Հայկ, կոծէ քո Աշխարհ՝ լեկեայն ննջմանդ ողբայ անընդհատ,
Լուէ Այրարատ ի սուգ արտմութեան՝ թախծեալ անխաղաղ Ազգին քոյ ի դատ,
Արագած ինքնին խնդրէ զվրէժդ՝ երաշտ խիստ ի յօգ տապէ զՀիրակ,
Իսկ ի վտակս իւր փայլն կարկաչեն՝ պահէ մեզ անխնայ զմահուն վրիժակ:

Զարթիր ի շիրմէդ Հսկայդ ի Քաջաց՝ սաղաւարտ ի գլուխ ձեր ի վրէժ թշնամեաց,
Լարնա դքս աղողդ կարշնեղ քոց բազկօք՝ վանել զնոսա զխնովին ի բաց,
Փայլեցո՞ զվահանդ երկսայրի սրով՝ նդատաջեա՛ փութով չարին ներքովմայ,
Լսելի արա շառաչիւն նետիդ՝ թափանցեա՛ ի խոր ի կուրծս երկաթեայ:

Շաւարշեան քո դաշտ ուր արդեօք թողեր՝ ի կոծ և ի սուգ հարեալ համօրէն,
Զորս երբեմն ի յուս քո բարձր սիրով՝ զմանկտիս Յարեթեան տածել հայրօրէն,
Ո՛հ ճակատադրիս բաղդադուրկ Հայոց, չեկաց ի վայելս երբեմն զԱխոյեանս,
Ախոյեան որպէս զքաջաղելն Հայկ, վարժ ի սուր վահան զերթ զԹորդոմեանս:

Հաշիւն սուսերաց շառաչիւն նետիդ՝ լսելի լինէր ի հովիտս լերանց,
Շաւարշեանն ի դաշտս դորձէր զնախճիրս ի ձեռն հսկայից Հայկազեան մանկանց,
Որպէս զարժիս պացեալ ի մարտ՝ շանթահար առին զգունդս ներքովմայ,
Որոյ թիւ զօրաց զերթ զաստեղծ երկնից՝ ընդառաջեալ անխոյժ զիւցադին Հայկայ:

Առ ի՞նչ դու արդեօք տհաճ ի խորհուրդս, ամբարտաւանիս այն վիսին Բեկայ,
Որոյ կամ եղեալ իրր զՏէր երկնից՝ պաշտեցուցանել զինքն ականաց,
Աստուածապաշտութեանդ ծանուցաւ խորհուրդ՝ առ ի հալածել զանարդ թշնամին,
Ի սէր Արարչին յանձն եղեր յԱստուած՝ տալ պաշտել զնա Թորդոմեան Ազին:

Որում ցանկայիր խանդակաթ սիրով՝ Դաւթեան Տաճարին տեսանել փառօք,
Յնձա՛ Ո՞այր մեր՝ արդ՝ Սիոնի՞ն խնդութեան՝ Աստուածեան խորանս պանծայ շնորհք,
Նոր Իորայեան զարդարի փառօք ասպարէզ Փրկչին շինեալն յաւետեանց,
Ընկալեալ զարիւն հեղեալ ի կողէն՝ Նորին օրհնելոյ վասն փրկութեանց:

Ո՛ր դու ա՛յց Հայոց, տուն Թորդոմեական, արի՛ք ի հանդէս Ազգասիրութեան,
Հաստատուն կացցուք ի սէր ազգութեան Հայկեան յասպարէզ հոգւով միութեան,
Թէ՛ն քոյ արկեալ յաղթանակ մարտից՝ Աքանազեան տան ի սուգ արտմութեան,
Սակայն պերճանայ խաշանիշ զարդուք ամբիժ Մայր Սիոնի լեռն սրբութեան:

Ո ՊԵՐԿԱՆ ՀԱՅԿԱՂՈՒՆԷ: